ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱԲՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ

Արաբների՝ Հայաստան կատարած առաջին արշավանքների մասին տեղեկություններ են հաղորդում ինչպես հայկական, այնպես էլ արաբական և ասորական աղբյուրները։ Այդ աղբյուրների ուշադիր քննությունը կարևոր փոփոխություններ ու ճշտումներ է մտցնում հարցի մինչև այժմ եղած պատկերացման մեջ։

Հրաբական հրոսակախմբերն առաջին անգամ Հայաստան են ներխուժել հարավ-արևմուտքից։ Առաջինը թշնամու հարձակմանը ենթարկվել է Տիգրանակերտի շրջանը կամ, ինչպես այն ժամանակ կոչվում էր, Չորրորդ Հայքը[1]։ Այդ մասին արաբական հեղինակ Իբն էլ-Աթիրը պատմում է. «Բյադ ուղարկեց Աբու Մուսային, որ հպատակեցավ, իսկ ինքն արշավեց Դարա և առավ քաղաքը։ Ապա նա ուղարկեց Ցսման իբն Աբուլ-Ասին Չորրորդ Հայք, որի ժողովուրդը պատերազմեցավ նորա հետ (Սաֆֆան իբն-Մուաթթալ նահատակեցավ կռվի մեջ), բայց հետո խաղաղություն հաստատեց նորա հետ՝ հարկ տալու պայմանով»[2]։ Չորրորդ Հայքը հպատակեցնելուց հետո արաբական զորամասերը շարժվում են դեպի Տարոն, որտեղ նրանց լուրջ դիմադրություն է ցույց տրվում իշխան Տիրան Սամիկոնյանի գլխավորությամբ։ Սակայն արաբները, շնորհիվ իրենց թվական գերակշռության, ընկճում են հայերի հերոսական դիմադրությունը և կողոպտելով շրջակայքը, արագությամբ անցնում են Վանա լճի հյուսիսային ափերով ու հանկարծակի երևում Արարատյան հովտում[3]։ Հեպքերին ժամանակակից Սեբեոսի մոտ այդ մասին կարդում ենք հետևյալը. «Եւ էլ զաւրապետանիշ յԱւտրեստան կոչմանէ ընդ ճանապարհս ձորոյ յաշխարհն Տարօնոյ. ուր զնա և զԲզնունիս և զԱդիովիտ։ Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Դոլովիտ՝ թափեցան յԱյրարատ»[4]։ Պատմիչի քիչ հետո արած այն հայտարարությունը, թե «...Ոչ որ կարաց ի զաւրացն Հայոց արկանել զոյժ ի Դուին աւան. բայց արք երեք իշխանացն [illegible] ցույց է տալիս, որ արաբները Տարոնից հետո, իրենց անցած ճանապարհին այլևս ոչ մի լուրջ դիմադրության չհանդիպելով, սրընթաց կերպով անցել են ահագին տարածություն և միանգամայն անսպասելիորեն ներխուժել Արարատյան հովիտը։ Արաբ-

---

1 *Չորրորդ Հայքը կազմվել էր բյուզանդական Մորիկ կայսեր ժամանակ (582—602), հիմնականում Հուստինիանոս I-ի (527—567) նույնանուն վարչական միավորի տերիտորիայից։ VII դարում Չորրորդ Հայքը ենթարկվում էր Բյուզանդիային և մոտավորապես համապատասխանում էր Տիգրանակերտի շրջանին (ուշ ժամանակների Դիարբեքիրի շրջան)։*

2 *Իբն էլ-Աթիր, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1908, N 2, էջ 48։*

3 *Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 285—286, տե՛ս նաև «Սոփերք Հայկականք», է, Վենետիկ, 1853, էջ 43—44։*

4 *«Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 109։*

5 *Նույն տեղում, էջ 109—110։*

ների արագ ու անդիմադիր առաջխաղացումն արդյունք էր նաև հայկական զորահրամանատարության թույլ տված սխալի։ Բանն այն էր, որ դեռ թշնամու ներխուժումից առաջ հայկական զորահրամանատարությունն ուշադրությամբ հետևում էր հարևան երկրներում արաբական ուժերի գործողություններին, իսկ սպարապետ Թեոդորոս Ռշտունին իմանալով, որ թշնամին շարժվում է Հայաստանի վրա, նույնիսկ շտապել էր կտրել նրա ճանապարհը։ Սակայն հայերին չի հաջողվում արաբներին հանդիպել, որովհետև վերջիններս կարողանում են ավելի շուտ անցնել այն վայրերից, որտեղ Թեոդորոս Ռշտունին նախատեսում էր կռվի բռնվել նրանց հետ։ Այդ մասին Ղևոնդի մոտ կարդում ենք. «...ազգ եղև առ իշխանն Թէոդորոս, եթէ հէն դարձուցեալ զայ ի վերայ աշխարհիս։ Իսկ նորա առեալ զզօրս իւր՝ կամէր ունել զկիրճս ճանապարհին Զորայոյ, այլ ոչ կարաց ժամանել յառաջս նոցա. քանզի ըստ օդաթևն արագութեան յարձակեալք իբրև օձք թևաւորք յառաջեցին թշնամիքն և զկնի իւրեանց թողեալ զզօրսն Հայոյ՝ դէմ եղեալ ընթացան ի մայրաքաղաքն Դուինայ»[6]։

Թշնամու առաջխաղացումը կանխել չկարողանալուց հետո, Թեոդորոս Ռշտունին իշխաններ Թեոդորոս Վահևունու, Խաչյան Առավեղյանի և Շապուհ Ամատունու միջոցով արաբների հարձակման դույժը շտապ հասցնում է Դվին և բնակիչներին ոտքի հանում[7]։ Սակայն շուտով դեպքերի ընթացքն անսպասելիորեն փոխվում է։ Թեոդորոս Ռշտունին, որ արաբների հետ հանդիպելու առաջին հնարավորություններ ձեռքից բաց թողնելուց հետո, ըստ երևույթին պետք է նրանց հետքերով շարժվեր և հարմար պահ ընտրելով ճակատամարտ տար, անսպասելի կերպով հայտնվում է Նախիջևանի կողմերում[8]։ Այս առեղծվածն այնպես էլ մնում է անհասկանալի սկզբնաղբյուրների ոչ բավարար տեղեկությունների պատճառով։ Դրա համար էլ առայժմ մենք նույնպես ստիպված ենք ենթադրելու, որ հյուսիսային Միջագետքից ու Ասորիքից Հայաստան մտած արաբական հրոսակախմբերի հետ միաժամանակ, հավանաբար, ուրիշ զորամասեր տպառնում էին նաև հարավ-արևելքից[9]։ Եվ այս նոր վտանգը կանխելու անհրաժեշտությունից ելնելով էր Թեոդորոս Ռշտունին Դվինը թողել ու շարժվել Նախիջևան։

Դվինի ուղղությամբ շարժվող արաբներն իմանալով, որ հակառակորդը դադարեցրել է հետապնդումը, արագացնում են իրենց հարձակումը, աշխատելով քաղաքը գրավել մինչև հայկական զորքերի կրկին հանդես գալը։ Արաբներին ոգնում է նաև Դվինի գրեթե անպաշտպան լինելու հանգամանքը, որովհետև այնտեղ փաստորեն մնացել էին միայն կանայք, երեխաները և շրջակայքի բնակավայրերից փախած անգեն ու անվարժ բնակչության մի մասը։ Ղևոնդն այդ մասին ուղղակի գրում է. «Եւ վասն զի թափուր գտին (արաբները, Ս. Մ.-Բ.) զքաղաքն յարանց պատերազմողաց, զի ամենեքեան կէտ Թէոդորոսի իշխանին գնացեալ էին, բայց միայն զկանայս և զմանկտիս և զայլ հաւանիճաղանճս, որք ոչ էին արք պատերազմի»[10]։ Եվ այսպես, արաբներն անցնելով Մեծամորի գետը, Բուշայի առաջնորդությամբ գալիս բանակ են դնում Դվինի մոտ, Խոսրովակերտ անտառի եզրին։ Այստեղ նրանք հանդստա-

6 «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 9։
7 Սեբեոս, էջ 109—110։
8 Նույն տեղում։
9 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 495, ծանոթ. 1։
10 Ղևոնդ, էջ 9։

Նալուց և քաղաքն ու սրա շրջակայքն ուշադիր կերպով գննելուց հետո հինգերորդ օրը միայն ամբողջ ուժով գրոհում են հայերի ամրությունների վրա։ Արաբներն սկզբում քաղաքի պարիսպների տակ ուժեղ ծուխ են առաջացնում և շրջոթեցնելով պաշտպաններին, սկսում են նետերի տարափ տեղալ ու կամաց կամաց քշել նրանց իրենց դիրքերից։ Հավանաբար կարճատև կռվից հետո արաբներին հաջողվում է պարիսպներին հենած սանդուղներով վեր բարձրանալ, ներխուժել քաղաք և ներսից բաց անել քաղաքի դռները։ «Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամաւրի,—գրում է Սեբեոսը,—հարին ասպատակաւ զամենայն արկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ, և եկեալ բանակեցաս ի յեկր մայրուոյն Խոսրովակերտի։ Եւ եղև յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերա։ բաղաքին մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուխ շուրջանակի. մերժեցին ծխովն և նետաձգութեամբ զպահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխս՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս բացին զդուռն քաղաքին։ Եւ դիմեալ ի ներքս կարք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին, և առեալ զաւար և զկապուտ քաղաքին՝ ելին և բնակեցան ի նմին բանակիտեղն, որ աւր Բ (20) էր տրէ ամսոյն, յաւր ուրբաթի»[11]։ Քաղաքը գրավելուց հետո կոտորածի սվերածության ու խոշտանգումների ամենամեծ բաժին ընկնում է խաղաղ բնակչության՝ կանանց, երեխաների ու ծերունիների վրա։ Դրանից հետո արաբներն զգալով, որ քաղաքում մնալը վտանգավոր է, գերիներով և մեծ ավարով կրկին քաշվում են իրենց ճամբարը։ Հայ և օտար մյուս հեղինակներն արաբների կողմից Դվինի գրավման մասին իրենց հաղորդած տեղեկություններով համարյա ոչինչ նոր բան չեն ավելացնում Սեբեոսի ու Ղևոնդի ասածների վրա։ Մեզ ծանոթ սկզբնաղբյուրների հեղինակները համարյա միաբերան վկայում են, որ արաբների կողմից Դվինում սպանվածների ընդհանուր թիվը հասնում էր 12000-ի, իսկ գերի տարվածներինը՝ 35000 մարդու[13]։ Այս թվերն ընդհանրապես վկայում են աղետի մեծությունը, բայց նրանք ստույգ ու ստույգ լինել չեն կարող։ Մեր կարծիքով դրանք լավագույն դեպքում կարող են վերաբերել ոչ թե միայն քաղաքին, այլ նաև շրջակայքի բնակավայրերին, որոնք նույնպես ենթարկվել են արհավիրքներին։

Դվինի գրավումն, ինչպես նաև ընդհանրապես արաբների Հայաստան կատարած առաջին արշավանքի ժամանակի վերաբերյալ միջնադարյան հեղինակները միասնական տեղեկություններ չեն հաղորդում, իսկ նրանց մեծ մասն ուղղակի թվականներ չի հիշատակում։ Բազմաթիվ հեղինակներից միայն Սամ-

11 Սեբեոս, էջ 110։

12 Ղևոնդ, էջ 9—10։

13 Տե՛ս «Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 398, «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն», Թիֆլիս, 1912, էջ 82, «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, էջ 255, «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 80—81, «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 93, „Chronique Syriaque de Denys de Tell-Mahre", տե՛ս Bibliotheque de L'ecole des Hautes Etudes, Paris, 1895, էջ 6։

14 Սամվել Անեցի, էջ 80, „De Denys de Tell-Mahre", էջ 6, Սեբեոս, էջ 110, Ղևոնդ, էջ 9, Ստ. Ասողիկ, էջ 120, Հովհ. Դրասխանակերտցի, էջ 82, Մովսես Կաղանկատվացի, էջ 255, Վարդան Արևելցին ցույց է տալիս 37000 (տե՛ս Վարդան Բարձրբերդցի, էջ 93), Կիրակոս Դանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 60—61։

վել Անեցին, Իբն էլ-Աթիրը և Դիոնիսիոս Թել Մահարցին են կոնկրետ թվականներ նշում։ Իբն էլ-Աթիրը արաբների ներխուժումը Հայաստան (Չորրորդ Հայք) և դրա հետ կապված դեպքերը շարադրում է հիջրայի տոմարով 19 թ. տակ, որը համապատասխանում է մեր թվականության 640-ին։ Ասորական պատմիչ Դիոնիսիոս Թել Մահարցին նշում է 640—641[16], իսկ Սամվել Անեցին՝ 642 թթ.[17]։ Սեբեոսը, Ստ. Ասողիկը, Հովհաննես Դրասխանակերտցին և Վարդան Արևելցին հաստատում են, որ վերոհիշյալ դեպքերը տեղի են ունեցել Եզրի եպիսկոպոսության ժամանակ, այսինքն 640 թ. ոչ ուշ, որովհետև Եզրի եպիսկոպոսության վերջին թվականը 640-ն է։ Հովհան Մամիկոնյանի և «Սոփերք Հայկականի» տվյալներով արաբներն առաջին անգամ Հայաստան են ներխուժել Խոսրով II Պարվեզի (590—628) մահվանից ութ տարի հետո[18], որը կլինի 636 թ.։ Եվ, վերջապես, Անանիա Շիրակացին և Մովսես Կաղանկատվացին նյութեր են ընդունում բյուզանդական կայսր Կոնստանս II-ին (642—668), ըստ որում առաջինն արաբների արշավանքը դնում է նրա թագավորության երկրորդ տարում, այն է՝ 643—644 թթ., իսկ վերջինը՝ վեցերորդ տարում՝ 647—648 թթ.[19]։ Այսպես, ուրեմն, արաբական արշավանքի և Դվինի գրավման համար մատնանշվում են՝ 636, 640—641, 642, 643—644 և վերջապես՝ 647—648 թվականները։

Արաբական առաջին արշավանքի և Դվինի գրավման մասին ուսումնասիրողների մեջ ևս գոյություն ունեն բազմաթիվ կարծիքներ ու ենթադրություններ, որոնք բխում են ինչպես սկզբնաղբյուրների հակասական տեղեկություններից, այնպես էլ տոմարական սխալ հաշվումներից։ Առաջին անգամ Ղ. Ալիշանն ու Համբարյանը, ուշադրություն դարձնելով Սեբեոսի այն վկայության վրա, որ Դվինի գրավումը տեղի է ունեցել Եզրի եպիսկոպոսության ժամանակ, տրև ամսի 20-ին, ուրբաթ օրը, տոմարական հաշվումներով գտան, որ այն համապատասխանում է մեր թվականության 640-ի հոկտեմբերի 6-ին[20]։ Ալիշանի հաշվումները ամենաճիշտն ու գիտականն էին, դրա համար էլ աստիճանաբար բաղաքացիություն ստացան և անառարկելիորեն ընդունվեցին հետագայում հիշյալ հարցերով զբաղվող մասնագետների՝ ակադ. Հ. Մանանդյանի[21], պրոֆ. Լեոի[22], պրոֆ. Բ. Առաքելյանի[23], Աս. Շահնազարյանի[24] և ուրիշների կողմից։ Ստորև մեր կատարած հաշվումները կրկին անգամ հաստատելով Ղ. Ալիշանի մատնանշած թվականի ճշտությունը, միաժամանակ հնարավորություն են տալիս մեզ որոշելու նաև այս արշավանքի մոտավոր տևողությունը։

Հովհաննես Դրասխանակերտցին և Վարդան Արևելցին, լրացնելով Սեբեոսին և Ստեփանոս Ասողիկին, մատնանշում են, որ Դվինի գրավումից անմի-

15 Իբն էլ-Աթիր, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1908, N 2, էջ 48։

16 „De Denys de Tell-Mahré", էջ 6։

17 Սամվել Անեցի, էջ 80։

18 Հովհան Մամիկոնյան, էջ 285, «Սոփերք Հայկականի», Է, էջ 43—44։

19 Անանիա Շիրակացի, էջ 398; Մ. Կաղանկատվացի, էջ 255։

20 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 407, 495։

21 Հ. Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում, տե՛ս նրա Մանր հետազոտություններ, Երևան, 1932, էջ 38—39։

22 Լեո, Հայոց պատմություն, հատ. 2-րդ, Երևան, 1947, էջ 311։

23 Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար, տե՛ս Գիտական ժողովածու, Երևան, 1941, էջ 66։

24 Ас. Шахназарян, Двин, Ереван, 1940, էջ 61—65։

ջապես հետո վախճանվեց Եզր կաթողիկոսը, որը աթոռակալեց տասը տարի[25]։ Սեզ հայտնի է, որ Եզրը կաթողիկոսական աթոռին բարձրացել է 630 թ., ուրեմն նրա պաշտոնավարության վերջին տարին կլինի 640-ը։ Եթե կարողանանք հաստատել, որ Եզրի մահվան թվականի, այսինքն հայոց 89 թ. տրեի 20-ը իրոք ուրբաթ օր է եղել, ինչպես այդ հաստատում է Սեբեոսը, ուրեմն ինչպես Դվինի գրավման, այնպես էլ Եզրի մահվան թվականը կհաստատվի անվերապահ կերպով։

Հայտնի է, որ հայոց մեկ թվականի նավասարդի 1-ը համընկել է 552 թ. հուլիսի 11-ին[26], որը հուլյան տոմարով եղել է հինգշաբթի օր[27]։ Նավասարդի 1-ը հինգշաբթի կլինի նաև հայոց 8, 15, 22, 29, 36, 43... 85 և այսպես յոթական հաշված բոլոր մնացած թվականներին։ Հայոց 86 թ. նավասարդի սկիզբը մեկ օրով առաջ ընկած կլինի, որովհետև տարին պարունակում է 365 օր, կամ 52 շաբաթ և մեկ օր, այսինքն 86 թ. կլինի ուրբաթ, 87 թ. շաբաթ, 88-ին՝ կիրակի և 89-ին՝ երկուշաբթի։ Եթե նավասարդի 1-ից յոթական հաշվենք դեպի առաջ, ապա երկուշաբթի կլինի նաև 89 թ. տրեի 16-ը, իսկ տրեի 20-ը կլինի ուրբաթ օր[28], որը ներկա թվականով կամ հուլյան տոմարով ճիշտ և ճիշտ համապատասխանում է 640 թ. հոկտեմբերի 6-ին։ Այս նույն եղանակով հաշվելով, տրեի 20-ը միշտ ուրբաթ է լինում նաև հայոց 89 (640) թ. և՛ դեպի ետ, և դեպի առաջ հաշված յուրաքանչյուր յոթերորդ տարում, այսինքն՝ հայոց 75 (625) թ., 82 (633) թ., 96 (647) թ., 103 (654) թ. և այսպես շարունակ։ Հաշվումների այս եղանակի և նրա ու տվյալ դեպքում Սեբեոսի հիշատակության ճշտության նկատմամբ այլևս ոչ մի կասկած լինել չի կարող։

Դվինի գրավման ժամանակով կարելի է մոտավորապես որոշել նաև արաբների Հայաստան ներխուժելու սկիզբը։ Մեր կարծիքով արաբներն իրենց հարձակումը Հայաստանի վրա պետք է ձեռնարկած լինեին 640 թ. ապրիլ-մայիս ամիսներին, որպեսզի մինչև աշուն կարողանային ետ վերադառնալ։ Իրենց համար դեռևս անծանոթ երկրից։ Եվ այդ ժամանակներից սկսած նրանք, հաղթահարելով հայերի այս ու այն տեղերում ցույց տված դիմադրությունը և տեղանքի դժվարությունները, հաղիվ կարող էին հոկտեմբերի սկզբներին Դվին հասնել։ Ուրեմն արշավանքի ամբողջ տևողությունը 640 թ. գարուն-աշունն է։ Դրա համար էլ արաբների Զորրորդ Հայք ներխուժելու մասին վերևում բերված տեղեկությունները Իբն էլ-Աթիրը շարադրում է հիջրայի տոմարով 19 թվականի տակ[29], որն ընդգրկում է մեր թվականության 640-ի հունվարի 2-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 21-ը[30]։ Ասորական պատմիչ Դիոնիսիոս Թել Մահարցու հիշատակությունը տարբերվում է միայն նրանով, որ նա հիշյալ դեպքերը դնում է 640—641 թթ.[31]։ Այսքանից հետո միանգամայն անտեղի է

25 Հով. Դրասխանակերտցի, էջ 82. Վարդան Բարձրբերդցի, էջ 93։

26 Ն. Այուրմելյան, Տոմարագիտություն ընդհանուր եկեղեցական և քաղաքական, Վենետիկ, 1818, էջ 21։

27 Ռ. Թումանյան, Ժամանակի չափումը, Երևան, 1956։

28 Այս հաշվումները համեմատված են նաև մաթեմատիկական գիտութ. թեկնածու Ռ. Թումանյանի «Աստղագիտությունը Հայաստանում հին և միջին դարերում» ձեռագիր աշխատության «Հայկական որացույցը» բաժնի հետ։

29 Իբն էլ-Աթիր, էջ 48։

30 Н. Орбели, Синхронические таблицы для перевода исторических дат по хиджре на европейское летоисчисление, Ленинград, 1961, էջ 10,

31 „De Denys de Tell-Mahré", էջ 6։

Մաղաքիա Օրմանյանի այն պնդումը, թե իբր Դվինի պաշարումը տևել է երեք ամիս՝ 640 թ. հոկտեմբերի 6-ից մինչև 641 թ. հունվարի 6-ը[32]։

Դվինը գրավելուց, կողոպտելուց և ավերելուց հետո արաբները Հայաստանում երկար չեն մնում։ Նրանք 640 թ. աշնանը ահագին ավարով ու գերիների մեծ խմբով բռնում են վերադարձի ճանապարհը մոտավորապես նույն ուղեգծով, որով եկել էին։ Եվ միայն այդ ժամանակ Թեոդորոս Ռշտունին փորձում է Կոգովիտում կտրել նրանց ճանապարհը ավարն ու գերիներին ազատելու համար, սակայն հաջողություն չի ունենում և մարտադաշտից հեռանում է ձեռնունայն[33]։

Արաբական զորքերի Հայաստանից հեռանալուց հետո միայն Բյուզանդական կայսրությունը գործնական քայլերի է դիմում իր գիրքերն այստեղ ամրացնելու համար։ Այդ նպատակով բյուզանդական իշխանությունները սկսում են հովանավորել հայ ազնվականությանը և ընդարձակել նրա իրավունքները։ 641 թ. Կոստանդին III կայսրը պաշտոնապես Հայաստանի սպարապետ է ճանաչում Թեոդորոս Ռշտունուն, որը պարսկական իշխանության բացակայության պայմաններում փաստորեն վարում էր նաև Արևելյան Հայաստանի զինվորական գլխավոր հրամանատարի պարտականությունները։ Թեոդորոս Ռշտունին այդ ժամանակ կայսրից ստանում է նաև թանկարժեք նվերներ և պատրիկի բարձր տիտղոսը։ Իսկ 643 թ. Կոնստանս II կայսրն իր դահակալությունը նշանավորում է նախկինում ուրիշների կողմից աքսորված հայ մեծամեծների նոր խմբի ազատություն շնորհելով, որոնց մեջ աղբյուրները հատկապես հիշատակում են Վահան Խոռխոռունուն, Վարազտիրոց Բագրատունուն ու նրա որդուն՝ Սմբատ Բագրատունուն[34]։ Այդ նույն ժամանակ կայսրը, ընդառաջելով Թեոդորոս Ռշտունու և հայոց կաթողիկոս Ներսես Տայեցու խնդրանքին, Հայաստանում կյուրապաղատության պաշտոնը տալիս է Վարազտիրոցին, որը սակայն իր նշանակումն ստանալուց քիչ հետո վախճանվում է, իսկ նրա պաշտոնն անցնում է որդուն՝ Սմբատին։

Բյուզանդական կայսրության, այսպես ասած, ուշադիր ու ընդառաջող վերաբերմունքը Հայաստանի ու հայերի նկատմամբ բխում էր ուժերի այն նոր փոխհարաբերությունից, որ առաջացել էր Մերձավոր Արևելքում՝ Արաբական խալիֆայության ասպարեզ գալուց ի վեր։

Արաբական առաջին արշավանքից հետո Հայաստանը դրվում էր ավելի մեծ վտանգի ու մշտական սպառնալիքի տակ, իսկ 642 թ. Պարսկաստանի ոչնչացումից հետո արաբների նոր ներխուժումները Հայաստան դառնում էին արդեն անխուսափելի։ Եվ արաբների երկրորդ արշավանքը տեղի ունեցավ հենց Պարսկաստանի մեծագույն մասի նվաճումից հետո։

Արաբները երկրորդ անգամ Հայաստան ներխուժեցին դարձյալ հարավարևմուտքից։ Այս անգամ նրանք, իրենց տրամադրության տակ ունենալով ավելի մեծ ուժեր, մարտական գործողություններ սկսեցին ծավալել ամբողջ Անդրկովկասում։

Բյուզանդական կայսրությունն արաբական երկրորդ արշավանքի նախորյակին որոշ չափով հոգ էր տարել իր դիրքերը Հայաստանում ամրացնելու ուղ-

---

[32] Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 704—705։
[33] Ներսես, էջ 110։
[34] Նույն տեղում, էջ 115—116։

գությամբ։ Կոնստանս կայսրը, հավանաբար 642 թ., Սմբատ Բագրատունու նշանակման ժամանակ, Հայաստան էր ուղարկել բավականաչափ ստվար մի բանակ, որը Ղևոնդի չափազանցված տեղեկություններով կազմված էր 60000՝ մարդուց։ Բյուզանդական զորքերը, որոնց առաջնորդում էր զորավար Պրոկոպը, տեղավորվել էր Արտազից արևմուտք՝ Բազուձորի և Մարդուցայքի շրջաններում[35]։ Եվ մինչդեռ Վասպուրականի վրայով Այրարատ ներխուժած արաբական զորագնդերից մեկը անմիջապես սպառնում էր բյուզանդացիներին, զորավար Պրոկոպը փոխանակ այդ մասին մտահոգվելու, իրեն պահում էր դոռոզ ու մեծամիտ, հաշվի չէր առնում ոչ մեկին ու նույնիսկ արհամարհում էր իրեն տրված բարի խորհուրդները։ Թեոդորոս Ռշտունին տեսնելով բյուզանդական զորքի ու զորապետության վարքագիծը, իր անձնական նախաձեռնությամբ ահագին միջոցներ ձեռնարկեց երկիրն ամրացնելու ուղղությամբ։ Այրարատ ներխուժած զորամասերից մեկը, որի զինվորների թիվը հասնում էր մոտ տասը հազար հոգու, դիմում է ուղիղ բյուզանդական զորքերի կայատեղը։ Եվ մինչդեռ պարծենկոտ Պրոկոպն անհոգ ու հանդիստ նստած էր իր զորակայանում, Թեոդորոս Ռշտունին թշնամու հարձակման մասին տեղեկացնում է նրան, սակայն վերջինս նախազգուշական միջոցներ ձեռնարկելու փոխարեն, արհամարհում է հայոց զորավարին։ Բյուզանդական զորավարը նույն կերպ է վարվում նաև Թեոդորոս Ռշտունու հետ նաև այն ժամանակ, երբ նա անձամբ դալիս է հույներին զգուշացնելու։

Բյուզանդական զորակայանից հեռանալուց հետո, Թեոդորոս Ռշտունին անմիջապես դիմում է վճռական գործողություններին։ Նա իր զորագնդերով դառնակալում է Մարդուցայքից Կոդովիտ տանող ճանապարհին Օղբարք Սարակ[36] կոչվող փոքրիկ լեռան մոտ, որտեղով պետք է անցնեին արաբական զորքերը։ Երբ արաբները ամրողջությամբ գտնվում էին մի կիրճի մեջ, հայերը նրա ելքն ու մուտքը կտրելով, սկսում են շեշտակի հարվածներ տեղալ թշնամու վրա։ Արաբներին ջախջախելուց և ահագին պատերազմական ավար ձեռք բերելուց հետո, հայերը քաշվում են դեպի Բառնի։ Հայերի համարձակ գործողությունները շարժում են բյուզանդացիների նախանձը և նրանք շուտով դուրս են գալիս արաբների դեմ։ Սակայն տեղի ունեցած ճակատամարտում պարտվում են և ահագին զոհեր տալով, կրկին վերադառնում իրենց զորակայանը՝ Մարդուցայք[37]։ Այս բոլորը մենք Ղևոնդի հիշատակության հիման վրա վերապատմում ենք ցույց տալու համար, որ այս ճակատամարտն ավելի ճիշտ կլինի կոչել Օղբարք Սարակի ճակատամարտ և ոչ թե Մարդուցայքի, ինչպես սխալ կերպով գրականության մեջ գործ է ածվում։

---

35 Մարդուցայքը, ըստ Ն. Ադոնցի, նույն Մարդաստան կամ Սեպհական գնդի երկիր կոչվող շրջանն է, որը գտնվում էր Վասպուրականի և Այրարատի սահմանում, Արտազից արևմուտք։ 591 թ. պայմանագրով Մարդուցայքը մտնում էր Արևմտյան Հայաստանի մեջ և կազմում նրա արևելյան սահմանամերձ շրջանը (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб. 1908, էջ 319. 417)։

36 Սարակ հայերենում նշանակում է փոքրիկ լեռ։ Օղբարք Սարակի ճշգրիտ տեղագրությունն անորոշ է։ Թ. Ավդալբեգյանը նույնացնում է Փավստոս Բուզանդի հիշատակած Եղբերք լեռան հետ, իսկ Հ. Մանանդյանը գտնում է, որ այդ լեռը պետք է գտնված լինի Մարդուցայք—Կոդովիտ ճանապարհի վրա (տե՛ս ակադ. Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 161)։ Ակնհայտ է, որ Հ. Մանանդյանի տեսակետն ավելի ճիշտ է։

37 Ղևոնդ, էջ 7—8, տե՛ս նաև՝ Ս. Ասողիկ, էջ 119—120։

Այրարատում գտնվող արաբական մի այլ զորամաս իր առաջին գործողությունները ձեռնարկում է Երևանի բերդի դեմ և անհաջողության մատնվելով, հարձակվում է Որդսպուի վրա[38], որտեղ նույնպես արժանի հակահարված ստանալով, հարկադրված քաշվում է դեպի Կոգովիտ ու կանգ առնում Արծափի նշանավոր բերդի մոտ։ Արծափը Կոգովիտի կենտրոն Դարույնքի մատույցներում գտնվող հայտնի ամրություններից մեկն էր։ Եվ թեպետ հայերն այստեղ քիչ ուժեր ունեին, բայց կարողանում են հերոսաբար ետ մղել թշնամու բոլոր գրոհները։ Սակայն հակառակորդի գերակշիռ ուժերին երկար դիմադրելը հնարավոր չէր։ Դրա համար էլ բերդականներից մի քանի հոգի Կախանակտուց կոչվող բարձունքի կողմից աննկատելիորեն իջնում և հասնում են Դարույնք օգնություն բերելու։ Ամրատ Բագրատունին, որը գտնվում էր քաղաքում, հաշիվ կարողանում է նրանց տալ 40 մարդ։ Հայ զինվորները գիշերով կրկին վերադառնում են Արծափ։ Սակայն նրանց վերելքը դեպի բերդը նկատվում է արաբների կողմից, որոնք նրանց հետքերով գաղտագողի վեր են բարձրանում ու գիշերով աննկատելիորեն ոչնչացնելով հայ ժամապահներից տասը հոգու, իրենց գրաված գիրքերը պահում են մինչև առավոտ։ Իսկ առավոտ վաղ, որ 643 թ. օգոստոսի 10-ի կիրակի օրն էր, արաբական զորքերը մի քանի ուղղություններով աղմուկ աղաղակով սկսում են գրոհել Արծափի վրա։ Կարճատև ու արյունահեղ կռվից հետո արաբները իրենց թվական գերակշռության շնորհիվ հաղթում են հայերին ու գրավում բերդը։ Այնուհետև սկսվում է կոտորածն ու ավերածությունը։ Արաբ շարագործների ձեռքն են ընկնում բերդում ապաստանած մեծ թվով կանայք և երեխաներ։ Սակայն թշնամին դեռ չէր վերջացրել իր հաղթանակի վայելքը ճաշակել, երբ հաջորդ առավոտյան անսպասելիորեն Արծափին է մոտենում հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին իր 2000 քաջարի հեծյալներով։ Հայերը անմիջապես գրոհելով սանձարձակ թշնամու վրա, որի թիվը 3000 էր, շեշտակի հարվածներով հենց նույն օրը ջախջախում են արաբներին ու ազատում բոլոր գերիներին։ Սպանվածների մեջ էին նաև արաբական զորագնդի երկու հրամանատարները՝ Օթմանը և Ոգոմանը։ Ճակատամարտում հայերը ձեռք բերեցին ահագին ռազմավար, պատերազմական հանդերձանք, զենքեր, ձիեր և այլն։

643 թ. Այրարատում գործող արաբական մյուս զորամասերը, որոնք իրենց ասպատակությունը սփռել էին նույնիսկ մինչև Տայոց աշխարհ, Վրաստան ու Աղվանք, արշավանքից վերադառնալուց հետո շարժվեցին Նախիջևանի վրա, պաշարեցին, բայց երկար ժամանակ չէին կարողանում գրավել։ Արաբական միացյալ ուժերի հարձակումները էլ ապարդյուն անցան։ Նախիջևանցիները հերոսաբար պաշտպանվում և հաջողությամբ ետ էին մղում թշնամու բոլոր գրոհները։ Քաղաքը գրավել չկարողանալով, արաբները ամբողջ ուժով գրոհե-

[38] Որդսպու բերդն ու բնակավայրը գտնվում էր Բերկրի—Կոգովիտ ճանապարհի վրա. Ակադեմիկոս Հ. Մանանդյանի և պրոֆ. Ս. Երեմյանի կարծիքով այն կարելի է նույնացնել Պետինգերյան քարտեզի Արտաշատ—Պարևակա ուղեգծում մատնանշվող Կատիսպի ճանապարհային կայանի հետ։ Իսկ Կատիսպին Մանանդյանը տեղադրում է Թուրքիայի Բայազետի շրջանի Տափարիզ (ավելի ճիշտ՝ Թափարիզ) գյուղի մոտ, որը ըստ ռուսական գլխավոր շտաբի տեղագրական քարտեզի գտնվում է Բայազետից 12 կմ հրվ. ամ.։ Տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 148—152, ինչպես նաև Ռուսական գլխավոր շտաբի տեղագրական քարտեզը։

[39] Սեբեոս, էջ 119։

դին մոտիկ գտնվող Խրամի բերդի վրա, դրավեցին այն, ավերեցին և մեծ թվով կանանց ու երեխաների դերի վերցնելով, իրենց հետ տարան Արարիա[40]։

643 թ. կռիվների ժամանակ բյուզանդական զորքերի կրած պարտությունն այն աստիճան զցեց այդ ժամանակ առանց այդ էլ ընկած նրանց հեղինակությունը, որ մինչև 646 թ. բյուզանդացիներն այլևս որևէ մասնակցություն չկարողացան ունենալ հայ-արաբական կռիվներին։ Եվ թեև բյուզանդացիների հեռանալուց հետո պատերազմի ամբողջ ծանրությունն իրենց վրա վերցրեցին հայերը, այնուամենայնիվ նրանք կարողացան միայնակ, առանց որևէ օգնության, մի քանի ճակատամարտերում պարտության մատնել արաբներին և նրանց մնացորդներին արտաքսեցին Հայաստանից։

Արծափի, Նախիջևանի ու Խրամի ճակատամարտերից հետո դեպքերի հետագա ընթացքը Հայաստանի տերիտորիայում կապված արաբական զորքերի գործողությունների հետ, դժբախտաբար ոչ բավարար չափով է արտացոլված ինչպես հայկական, այնպես էլ արաբական սկզբնաղբյուրներում։ Դրա համար էլ 643-ից մինչև 646 թ. պատմական անցքերի պատկերն ու նրանց հաջորդականությունը այնքան էլ պարզ չէ։ Արաբ հեղինակներ Ալ-Յակուբիի, Բալաձուրիի, Տաբարիի և Իբն էլ-Աթիրի համարյա նույնանման տեղեկություններից պարզվում է, որ արաբական զորքերի և զինված հրոսակախմբերի հարձակումներն ու ասպատակությունները Հայաստանում շարունակվել են նաև 643 թ. հետո մի քանի տարի անընդհատ, մինչև 646 թ. և այդ գործողությունները պլանավորվում ու կազմակերպվում էին արաբական իշխանությունների ու զորահրամանատարության գիտությամբ ու առաջադրանքով։ 643—646 թթ. դեպի Հայաստան կատարված արշավանքները հիմնականում տեղի էին ունենում Հայաստանի արևելյան կողմերից և այդ արշավանքների մեջ կարևոր դեր էին կատարում Աղվանքի տերիտորիայում գտնվող արաբական ուժերը։ Բալաձորիի և Տաբարիի վկայություններից երևում է, որ 645—646 թթ. Հայաստանն ու Աղվանքը գտնվում էին ապստամբված վիճակում և չէին կատարում արաբների հետ նախկինում կնքված խաղաղության ու հարկատվության պայմանները։ Սման խալիֆը հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, Աղվանքից ետ է կանչում Ուտբային և նրա փոխարեն զորահրամանատար է նշանակում Վալիդ իբն-Ուկբային։ Վերջինս իր ենթականերից Սալման իբն-Ռաբիա Բահլիին 12 հազար զինվորով ուղարկում է Հայաստան, իսկ ինքը հրամանատարներից մեկ ուրիշի՝ Արդուլահի հետ միասին, դուրս գալով Մուղանից, ռազմական գործողություններ է ձեռնարկում Աղվանքի ապստամբների դեմ։ «Այդ թվին (646 թ.),—ասում է Տաբարին,—Վալիդ իբն-Ուկբան արշավանք ձեռնարկեց Աղվանք ու Հայաստան, քանի որ նրանց բնակչությունը դրաժարվեց կատարել այն պայմանները, որ մուսուլմանները կնքել էին խաղաղությամբ»[41]։ Արաբ հեղինակները այնուհետև հաստատում են, որ Սալման Բահլին կողոպտում, ավերում է Հայաստանը և նրա բնակիչների մի մասին սպանելուց ու գերելուց հետո, ետ է վերադառնում Վալիդի մոտ[42]։

---

40 Սեբեոս, էջ 119—120։

41 Տաբարի, տե՛ս Институт истории и философии АН Азерб. ССР, фонд № 577, էջ 14. Թարգմանություն պրոֆ. Պ. Կ. Ժուզեի, Баладзорн, Книга завоевания стран, текст и перевод с арабского проф. П. К. Жузе. Баку, 1927, էջ 23։

42 Տաբարի, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1905, № 8, էջ 215, տե՛ս նաև Ալ-Յակուբի, տե՛ս „Сборник материалов для описания местностей и племен Кавказа", հ. XXXII, էջ 61, Իբն-էլ-Աթիր, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1908, № 2, էջ 48։

Արաբական երկրորդ արշավանքի տարեթվի վերաբերյալ նույնպես սկզբնաղբյուրները հաղորդում են հակասական տեղեկություններ։ Ըստ Սեբեոսի այն տեղի է ունեցել 643 թ., իսկ ըստ արաբական հեղինակների՝ 644—645 կամ՝ 645—646 թթ.։ Միանգամայն տարբեր թվականներ են տալիս Ղևոնդն ու Ստեփանոս Ասողիկը։ Ըստ առաջինի՝ արշավանքը տեղի է ունեցել Աբու-Բաքրի և Օմարի խալիֆայության 22-րդ տարում, այսինքն՝ 653—654 թթ.[43], իսկ ըստ երկրորդի՝ նրանց 36-րդ տարում՝ 667—668 թթ.[44]։ Այս հարցի կապակցությամբ առանձին հետաքրքրություն են ներկայացնում արաբական հեղինակների տվյալները։ Սեբեոսի ու արաբական հեղինակների ցուցմունքների ուշադիր քննությունը մեզ բերում է այն համոզման, որ սրանց մեջ էական տարբերություն չկա. Սեբեոսը խոսում է արշավանքի սկզբների, իսկ արաբական հեղինակները, ինչպես այդ տեսանք վերևում, նրա վերջին տարիների մասին և փաստորեն երկուսն իրար լրացնելով, ամբողջացնում են երկրորդ արշավանքի ժամանակագրությունը, որն ընդգրկել է 643—646 թթ.։ Մեր ասածները հաստատելու համար դիմենք սկզբնաղբյուրներին և քննենք նրանցից ամենակարևորների տեղեկություններն առանձին-առանձին։

Սեբեոսը, որ VII դարի ժամանակագրության հարցում մրցակից չունի, իր Պատմության մեջ մի քանի անգամ տարբեր առիթներով հիշատակում է արաբների երկրորդ արշավանքի ժամանակը։ Ահա դրանցից առաջինը. պատմիչը, խոսելով բյուզանդական կայսր Կոնստանս II-ի դահ բարձրանալու մանրամասնությունների և ուրիշների կողմից նախկինում աքսորված Սմբատ սպարապետ Բագրատունու, Վահան Խորխորունու և մյուսների ազատության մասին, ասում է՝ «Եւ եղև ի դալ միւսում ամի Հկն գաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան լերիս։ Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանսն, և առաջ մի յԱղուանս»։ Պատմիչի ասած «Եւ եղև ի դալ միւսում ամի...» կլինի 643 թ., որովհետև հայտնի է, որ Կոնստանս II-ը դահ է բարձրացել 642 թ.։ Իսկ այս հիշատակության շարունակության մեջ, որտեղ մեր հեղինակը պատմում է արաբների կողմից Արծափի բերդի գրավման մասին, թվականների հարցում ուշադիր ու բարեխիղճ պատմիչն ուղղակի ասում է՝ «Եւ եղև յամին երկրորդի Կոստանդնի, յամսեանն Հոռի, որ սուր ԻԳ (23) էր ամսոյն, յաւուրն կիւրակէի ընդ առաւաւտս...»[45] և այլուր Այսինքն՝ այս դեպքը տեղի է ունեցել Կոնստանս II-ի թագավորության երկրորդ տարում (Կոնստանս II-ը թագավորել է 642—668 թթ.)՝ 643 թ., Հոռի ամսի 23-ին, կիրակի օրը, վաղ առավոտյան։ Այստեղ նույնպես, ինչպես Դվինի գրավման առիթով, անհրաժեշտ է տոմարական ճշգրիտ հաշվումներով ստուգել, թե իրո՞ք 643 թ., այսինքն՝ հայոց 92 թ. Հոռի ամսի 23-ը կիրակի օր է։ Եվ միայն այդ ամսաթվի ստույգ լինելը կարող է հաստատել դեպքի՝ Կոնստանս II-ի թագավորության երկրորդ տարում, այսինքն 643 թ. կատարված լինելը։ Այդ հաշվումը կատարելու համար նախ պետք է հույլյան 643 թ. վերածել հայոց մեծ թվականին, ապա գրանել հայկական հիշյալ թվականի նոր տարվա սկիզբը, այսինքն՝ նավասարդի 1-ը և հետո ստուգել Հոռի ամսի 23-ի ինչ օր լինելը, որից հետո արդեն հնարավոր է հայոց թվականի և ամսաթվի համապատասխան որոշել հույլյան տոմարով։

43 Ղևոնդ, էջ 8։
44 Ստ. Ասողիկ, էջ 121—122։
45 Սեբեոս, էջ 118։
46 Նույն տեղում, էջ 119, Ղևոնդ, էջ 3։

Մեր ստուգումները ցույց են տվել, որ հայոց 89 թ. (այսինքն ներկա մեր թվականության 640-ից) մինչև 98 (ներկա թվականությամբ՝ 649) թ. միայն 92 թ. (այսինքն մեր թվականությամբ 643 թ.) հոռի ամսի 23-ն է կիրակի օր[47], իսկ 92 թ. հոռիի 23-ը համապատասխանում է հուլյան տոմարի 643 թ. օգոստոսի 10-ին[48]։ Եթե այդպես է, ուրեմն դժվար չէ հետևցնել, որ արաբները Հայաստան պետք է ներխուժած լինեին Արծափը գրավելուց ամենաքիչը մի երկու ամիս առաջ և նրանք այդքան ժամանակում էլ հազիվ կարողանային հասնել մինչև Կոգովիտ գավառն ու Արծափ բերդը։ Այս դեպքում արաբների երկրորդ ներխուժումը Հայաստան կարող ենք մոտավորապես դնել հայոց 91 թ. վերջերին կամ հուլյան տոմարով՝ 643 թ. դարնանը։

Արաբական պատմիչ Ալ-Յակուբին ու Տաբարին վերոհիշյալ դեպքերը դնում են հիջրայի 24 թ., այսինքն 644—645 թթ.[49], իսկ Բալաձորին և Իբն էլ-Աթիրը՝ 25 թ., այսինքն՝ 645—646 թթ.[50]։ Այստեղ արաբական հեղինակները ոչ թե սխալվում են երկրորդ արշավանքի թվականի հարցում, այլ պարզապես, ինչպես ասվել է վերևում, անդրադառնում են միայն այդ արշավանքի վերջին տարիների գործողություններին։

Այսպիսով, արաբական երկրորդ արշավանքի ժամանակի հարցը քննարկելիս, մենք համոզվեցինք, որ մինչև այժմ գիտական գրականության մեջ մտած այսպես կոչվող արաբական երրորդ արշավանքը (որ դրվում է 650 թ.) իրականում տեղի չի ունեցել[51]։ 650 թ. մի նոր արշավանքի տեղի ունենալը դեպի Հայաստան ոչ միայն չէր բխում 648—652 թթ. գարգացող հայ-արաբական քաղաքական փոխհարաբերություններից, այլև այդ մասին աղբյուրները պարզապես հիշատակություն չունեն։ Այդ սխալը փաստորեն առաջացել է տոմարական ոչ ճիշտ հաշվումի պատճառով, երբ Սեբեոսի հիշատակած Արծափի բերդի գրավման ժամանակը 643 թ. օգոստոսի 10-ի կիրակի օրվանից միանգամայն սխալ կերպով փոխադրվել է 650 թ. օգոստոսի 8-ը՝, որը թեև նույնպես կիրակի է[53], բայց Արծափի գրավման հետ ոչ մի առնչություն չունի։ Սեբեոսի, մեր կողմից վերևում բերված երկու կոնկրետ հիշատակություններով նույնպես անվերապահ կերպով հաստատվում է, որ Արծափի գրավումը տեղի է ունեցել «...ի գալ միւսում ամի (այսինքն Կոնստանսի թագավորության հաջորդ տարին՝ 643 թ. Ս. Մ.-Բ.)», «Եւ եղև յամին երկրորդի Կոստանդնի (այսինքն՝ դարձյալ 643 թ., Ս. Մ.-Բ.)», որոնց մասին մենք հանգամանորեն խոսել ենք վերևում։

Ամփոփելով վերևում մեր ասածները արաբների՝ Հայաստան կատարած առաջին արշավանքների մասին, հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Արաբների առաջին արշավանքը դեպի Հայաստան սկսվել է 640 թ. գար-

---

47 Բ. Թումանյան, Աստղագիտություն Հայաստանում (ձեռագիր)։

48 Բ. Թումանյան, Ժամանակի որոշումը։

49 Ալ-Յակուբի, տե՛ս Сборник материалов... Тифлис, հատ. 32, էջ 61, Տաբարի, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1905, № 8, էջ 245։

50 Баладзори, Книга завоевания стран, էջ 25, նաև՝ Իբն էլ-Աթիր, էջ 48։

51 Այդ սխալը կրկնվել է և մեր կողմից. տե՛ս մեր Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953, էջ 82, նույնը ռուսերեն, էջ 95, Հայ ժողովրդի պատմություն, պր. 3, Երևան, 1958, էջ 12, Հայ ժողովրդի պատմություն. հատ. 1, Երևան, 1963, էջ 372։

52 Հ. Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում, էջ 53։

53 Բ. Թումանյան, Աստղագիտություն Հայաստանում (ձեռագիր)։

նանր Չորրորդ Հայք—Տարոն—Վանա լճի ավազան—Այրարատ ուղեղծով, ապրիլ-մայիս ամիսներին։ Նույն թվականի հոկտեմբերի 2-ին արաբները հասնում են Դվին և, ինչպես Սեբեոսն է ասում, միայն հինգերորդ օրը, այսինքն հոկտեմբերի 6-ին, գրոհելով քաղաքի վրա, գրավում են այն։

2. Արաբական երկրորդ արշավանքը Հայաստան սկսվել է 643 թ. դարնանը դարձյալ նույն ուղղությամբ, ինչ ուղղությամբ տեղի էր ունեցել առաջինը։ Այս անգամ հայերը, թեև անհրաժեշտ աջակցություն չստացան Հայաստանում գտնվող բյուզանդական զորքերից, ուսկայն առաջին արշավանքի փորձից ելնելով, թշնամու դեմ հանդես եկան ավելի կազմակերպված և համախմբված ուժերով և կարողացան մի քանի ճակատամարտերում ջախջախել հակառակորդի ուժերը։ Երկրորդ արշավանքը ընդգրկել է 643—646 թթ.։

3. Սկզբնաղբյուրների ուշադիր քննությունը և տոմարական ճշգրիտ հաշվումները բացառում են 650 թ. դեպի Հայաստան մի երրորդ արշավանքի տեղի ունենալու հանգամանքը։ 650 թ. արշավանք տեղի ունենալու մասին կարծիքը, որը մինչև այժմ տրադիցիոն կերպով կրկնվել է բոլոր ուսումնասիրողների կողմից, տոմարական սխալ հաշվումների և Սեբեոսի պարզ ու հստակ հիշատակության անտեսման հետևանք է։

4. VII դարի կեսերին արաբական խալիֆայության դեպի Հայաստան ձեռնարկած բոլոր արշավանքներն էլ հետապնդում էին ավարառուական և հետախուզական նպատակներ։ Դրանք փաստորեն նախապատրաստում էին արաբական խալիֆայության տիրապետության հաստատումը Հայաստանում, որը տեղի ունեցավ միայն VII դարի վերջերին։

ЗАМЕЧАНИЯ О ПЕРВЫХ ПОХОДАХ АРАБОВ В АРМЕНИЮ

С. Т. МЕЛИК-БАХШЯН

(Резюме)

Первый поход арабов в Армению начался в апреле-мае 640 г. по маршруту: Четвертая Армения — Тарон — бассейн оз. Ван — Айрарат. 2 октября указанного года арабы достигли Двина, который захватили на пятый день штурма — 6 октября.

Второй поход арабов имел место в 643—646 гг. и осуществлялся по тому же маршруту. На этот раз армяне выступили против захватчиков более сплоченно и организованно и, несмотря на то, что не получили помощи со стороны размещенных в Армении византийских войск, в нескольких сражениях разбили вражеские войска.

Тщательное изучение первоисточников и имеющихся в них дат отвергают мнение о том, что якобы в 650 г. имел место еще один — третий по счету — поход арабов в Армению. Это мнение, повторяемое всеми исследователями, является результатом игнорирования данных, содержащихся у Себеоса.

Все походы арабского халифата в Армению в середине VII в. подготавливали утверждение владычества халифата в Армении, что произошло лишь в конце VII в.